

**ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՅԵՈՒՑՄԱՆ ՍԵԿՏՈՐԻ ԾՐԱԳԻՐ –
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՈՒՄ**



Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ա Կ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ

**ԱԶԲ -2. ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

I Ենթաճրագիր, փաթեթ 3 - Սուսայեռ, Շահումյան, Շահումյան Թ/Ֆ, Պտղունք, Նորակերտ գյուղերի ջրամատակարարման համակարգերի բարելավում



Ֆինանսավորող կազմակերպություն՝
Պատվիրատու՝
Խորհրդատվական կազմակերպություն՝

Ասիական Ջարգացման Բանկ
«Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ
ՀԳՇՆ ՍՊԸ - ՋԻՆՋ ՍՊԸ

Երևան 2014 թ

ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող «Ջրամատակարարման և Ջրահեռացման (ՋՋ) սեկտորի ծրագիր - լրացուցիչ ֆինանսավորում» ծրագիրը ներառում է 10 ենթածրագիր և ընդգրկում է Հայաստանի 10 մարզերի շուրջ 110 բնակավայրեր (18 բաղաքներ և 92 գյուղեր):

Ծրագրի նպատակն է ընտրված համայնքներում բարելավել առկա ջրամատակարարման համակարգերը, ինչպես նաև ծառայությունների մակարդակը:

«Ջրամատակարարման և Ջրահեռացման (ՋՋ) սեկտորի ծրագիր - լրացուցիչ ֆինանսավորում» ծրագիրը բաղկացած է 2 բաղադրիչից. Ա բաղադրիչ - «Համայնքային ենթակառուցվածքների վերականգնում և բարելավում», Բ բաղադրիչ - «Կառավարման բարելավում և կարողությունների զարգացում»:

Ա բաղադրիչն անդրադառնում է գոյություն ունեցող ջրամատակարարման ենթակառուցվածքների բարելավմանը, ինչը ներառում է մոտ 600.0կմ մայր ջրատարների և բաշխիչ ցանցերի վերականգնում, մոտ 110000 գոյություն ունեցող և նոր տնային տնտեսությունների ջրագծերի միացում ցանցին, 5 պոմպակայանների և 3 քլորակայանների, ջրի մաքրման մեկ կայանի, օրվա կարգավորման 15 ջրամբարների վերանորոգում, ինչպես նաև մոտ 20000 ջրաչափերի տեղադրում՝ հասարակական օբյեկտների և անհատ սպառողների համար:

Բ բաղադրիչն անդրադառնում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ գործառնական և կառավարման հետագա բարելավմանը, ինչպես նաև հանրության իրազեկման բարձրացմանը: Հանրային իրազեկման քարոզարշավ նախատեսվում է ծրագրում ընդգրկված բոլոր համայնքներում, որի ժամանակ շահագրգիռ բնակչությանը կտրամադրվի տեղեկատվություն ծրագրի իրականացման տարբեր ասպեկտների վերաբերյալ՝ ներառյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության, սոցիալական, գենդերային և անվտանգության միջոցառումները:

Յուրաքանչյուր ենթածրագրի շրջանակներում խորհրդատվական կազմակերպությունն իրականացրել է նախագծային աշխատանքներ, որոնց մեջ բացի նախնական և աշխատանքային նախագծերի մշակումից, ԱԶԲ-ի պահանջով, ներառվել են նաև շրջակա միջավայրի պահպանության, սոցիալական, տարաբնակեցման և գենդերային հետազոտություններ, տարաբնակեցման, սոցիալական, գենդերային հարցեր և հանրային իրազեկման արշավ:

Բնապահպանական հարցեր - ծրագրի նախագծային փուլում իրականացվել է շրջակա միջավայրի ուսումնասիրություն և յուրաքանչյուր ենթածրագրի համար մշակվել է տեղանքին բնորոշ «Շրջակա միջավայրի կառավարման պլան»: ՇՄԿ-ի մեջ ներառվել են ազդեցությունը մեղմացնող միջոցառումներ, որոնց կատարումը շինարարական աշխատանքների ժամանակ պետք է պարտադիր վերահսկվի տեխնիկական վերահսկող թիմի և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի համապատասխան մասնագետների կողմից:

Սոցիոլոգիական հարցումներ իրականացվում են 2 փուլով՝ նախագծման ընթացքում և շինարարական աշխատանքների ավարտից հետո: Հարցումներն անցկացվում են հատուկ մշակված հարցաշարի միջոցով: 1-ին փուլի հարցումների իրականացման ժամանակ բացահայտվել է համայնքներում առկա

ջրամատակարարման վիճակն ու գոյություն ունեցող խնդիրները, ՁՁ համակարգերի բարելավված ծառայությունների դիմաց վճարելու պատրաստակամությունը: 2-րդ փուլում հնարավոր կլինի բացահայտել նաև տվյալ ծրագրի իրականացման արդյունքները և բնակչության բավարարվածությունը ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքներով:

Գեոդերային հարցեր – ծրագրում հատուկ ուշադրություն է հատկացվում կանանց մասնակցության հարցերին: Կանանց մասնակցությունը խրախուսվում է ինչպես խորհրդատվական կազմակերպությունների թիմում աշխատելու, այնպես էլ ծրագրի արդյունքում նրանց առողջական և սանիտարահիգիենիկ պայմանների բարելավված հարցերում: Հանրային իրազեկման քարոզարշավների ընթացքում հնարավորինս ներգրավվում են կանայք՝ որպես ծրագրի օգուտների վերաբերյալ հասարակական իրազեկության բարձրացման խթանողներ: Ծրագրով նախատեսվում է շահագրգիռ կանանց շրջանակներում բացահայտել հիմնական խնդիրները և հրատարակել տեղեկատվական պաստառներ՝ հանրային վայրերում տարածելու նպատակով:

Տարաբնակեցման հարցեր – ընդհանուր ենթածրագրի նախնական ուսումնասիրության ժամանակ բացահայտվել է, որ նախագծային և շինարարական փուլում չեն առաջանա որևէ խնդիրներ բնակչության ֆիզիկական տարաբնակեցման վերաբերյալ, ինչպես նաև չեն ծագի նույնիսկ ժամանակավոր տարաբնակեցմանն առնչվող հարցեր, որոնք կպահանջեն փոփոխություն: Յուրաքանչյուր ենթածրագրի համար կկատարվի առանձին նախնական ուսումնասիրություն՝ հողի ձեռքբերման և տարաբնակեցման (ՀՁՏ) հարցերի շրջանակների որոշման և հստակեցման վերաբերյալ:

Հանրային իրազեկման քարոզարշավներ նախատեսվում է անցկացնել ենթածրագրի բոլոր համայնքների բնակիչների և այլ շահառու կողմերի մասնակցությամբ /տեղական ՀԿ-ներ, իրավաբանական անձ բաժանորդներ և այլն/: Հանրային իրազեկման ընթացքում նախատեսվում է հնարավորինս սերտ համագործակցություն տեղերում գործող բնապահպանական տեղեկատվական կենտրոնների /Օրիուսի կենտրոններ/ և այլ համայնքաին կազմակերպությունների հետ:

Ի ենթածրագրով նախատեսվում է բարելավել Լեռնամերձ, Ամբերդ, Այգեշատ, Դաշտ, Դոդս, Շահումյան, Շահումյան ԹՖ, Մուսալեռ, Նորակերտ, Ոսկեվազ, Ոսկեհատ, Օշական, Աղավնատուն, Պողոնք գյուղերի ջրամատակարարման համակարգերը:

Բնակավայրերի ընտրությունը կատարվել է ըստ ԱԶԲ-ի կողմից ընդունված բնակավայրերի ընտրության չափանիշների՝

- ջրի մատչելիություն,
- ջրամատակարարման վիճակ (ջրամատակարարման գրաֆիկ, տևողություն, ջրի որակ, համակարգի տեխնիկական վիճակ),
- ջրահեռացման վիճակ,
- ցանցի տեխնիկական վիճակ,

- վարձավճարների ներկայիս հավաքագրման մակարդակ,
- բնակչության վճարունակություն և վճարման պատրաստակամություն,
- համայնքի ֆինանսական կայունություն:

Ենթաժողովի համայնքներում խմելու ջրամատակարարումն իրականացվում է վթարային, ոչ բարվոք վիճակում գտնվող ներքին ցանցերի միջոցով: Զգալի չափերի են հասնում հոսակորուստները, լիարժեք չի կատարվում նաև համակարգում ջրի սպառման հաշվառումը:

Վերը նշված ենթաժողովի համար մշակվել են նախնական և աշխատանքային նախագծերը, որոնք ներառում են փաստաթղթային ուսումնասիրություններ, բնակչության և ջրապահանջի կանխատեսումներ, առկա իրավիճակի գնահատում, առկա խնդիրների և թերությունների, մինչև 2040թ. ջրամատակարարման պահանջարկի վերլուծություն, շրջակա միջավայրի նախնական գնում և ՇՄԿՊ-ի մշակում, հանրային իրազեկում, սոցիալական, տարաբնակեցման և զենդեքային ուսումնասիրություններ, որոնց հիման վրա մշակվել են ԶԶ համակարգերի բարելավման առաջարկներ: Առաջարկների ֆինանսական վերլուծության հիման վրա կատարվել են ներդրումային գնահատումներ:

Մուսալեռ գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավմանն ուղղված շինարարական աշխատանքներ

Ներքին ջրամատակարարման համակարգ

- 50-160մմ տրամագծերի 8.2կմ պոլիէթիլենե ջրագծերի կառուցում
- 50-150մմ տրամագծերի թվով 24 թաղված տեղադրման փականային հանգույցների կառուցում
- թվով 1 փականային հանգույցի կառուցում
- թվով 2 ջրաչափական հանգույցների կառուցում
- 5.0կմ ընդհանուր երկարությամբ 20-32մմ տրամագծերի պոլիէթիլենե խողովակներով մուտքագծերի կառուցում անհատական տների համար՝ 429 ջրաչափական հորերի տեղադրմամբ:

Ծրագրի կոնտակտներ՝

ՀՀԿ ՓԲԸ Ներդրումային ծրագրերի համակարգման տնօրինություն, հեռ: 010 542877

Բաժանորդների սպասարկման կենտրոն – 1 71

Ջրաչափի ցուցմունքը կարճ հաղորդագրության տեսքով – 81 71